

Վ. ԴԱՐՅԱՆ

ԽՈՇՌԴԱՅԻՆ ԳԱՎԱՌԱԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ  
ՅԵՎ  
ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՈՒՍՎՈՐՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐԸ

91  
7-27

ՅԵՐԵՎԱՆ

ԼՈՒՍՎՈՐՈՒԹՅԱՆ

1940

5 OCT 2011

ՀԱՅԿԱՆԻ ԽՍՀ ԼՈՒՍՖՈՂԿՈՄԱՏ

91

Դ-27  
աշ

Վ. ԴԱՐՅԱՆ

ԽՈՐՃՐԴԱՅԻՆ ԳԱՎԱՌԱԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ ՅԵՎ  
ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՈՒՍՎՈՐՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐԸ

ԼՈՒՍԴԱՏ  
ՑԵՐԵՎԱՆ

1940

20139

ԽՈՐՃՐԱՅԻՆ ԳԱՎԱՐԱԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ ՅԵԿ  
ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՈՒՍԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՀՄԱՆԱՐԿՆԵՐԸ

Խորհրդային գավառագիտությունը—յերկրագիտությունը բաղմաթիվ կապերով ամենասերտ կերպով կապված ե քաղաքական լուսավորության վողջ սիստեմի աշխատանքների հետ:

Գավառագիտության — յերկրագիտության ուղղությամբ կատարված աշխատանքները հանդիսանում են հենց քաղաքական լուսավորության որգանի հիմնական ֆունկցիաներից մեկը:

ի՞նչ ե խորհրդային գավառագիտությունը —  
յերկրագիտությունը:

Արդյոք մի առանձին գիտություն ե: Ի հարկե,  
վաչ:

Գավառագիտությունը—յերկրագիտությունը ա-  
սանձին գիտություն չեւ Խորհրդային գավառագի-  
տությունը, դա մասսայական, համաժողովը ը-  
դական միշտում եւ մեր յերկիրն ուսումնա-  
սիրելու, ճանաչելու ուղղությամբ Ինչպես արդեն ան-  
վանումն ել ցույց եւ տալիս՝ «գավառագիտություն—  
յերկրագիտություն», նշանակում եւ «գավառը—յերկի-  
րը գիտենալ», ճանաչել ուսումնասիրել մեր յերկիրը,  
ընակավայրերից սկսած մինչև մեր վողջ սոցիալիս-  
տական հայրենիքը՝ ԽՍՀՄ-ն:

1519

40

50

Այսպես ուրեմն, գավառագիտությունը լինելով  
մասսայական շարժում, վորն ուղղված է մեր յերկիրը,  
բնակավայրերը, կամ մեր վողջ հայրենիքն ուսումնա-  
սիրելու գործին, չի կարող այդ ուսումնասիրությունը  
կատարել անջատանջատ, վերցնելով միմիայն մի  
բնագավառ:

Բացատրենք որինակներով:

Կարելի յե գիտենալ ճանաչել մեր յերկիրը, չու-  
սումնասիրելով մեր յերկրում ապրող ժողովուրդների  
պատմությունը: Ի հարկե, վհչ: Խորհրդային ժողովուր-  
դըն անհունորեն սիրում և իր սոցիալիստական  
հայրենիքը և ձգտում և գիտենալ իր յերկրի անցյալ  
պատմությունը, բանվորների և զյուղացիների կող-  
մից մղած պայքարի հերոսական մարտերի պատմու-  
թյունը շահագործողների դեմ: Այդ դաստիարակում և  
մեր ժողովրդներին, նրանց մեջ զարգացնելով խոր-  
հըրդային հայրենասիրության գդացմունքներ:

Յեզ վերջապես, չե վոր մեր Մեծ Առաջնորդ ըն-  
կեր Ստալինն ասել ե, վոր վիերսեղծել իրականու-  
թյունը կարելի յե միմիայն այն ժամանակ, յերբ մենք  
այն նանազում ենք: Յեզ ահա անցյալ պատմության հե-  
րոսական եջերն ուսումնասիրելով, մենք ավելի լավ  
ենք ըմբռնում մեր պայծառ և առավել հերոսական  
ներկան: Ուրեմն՝ խորհրդային գավառագիտության  
խնդիրներից մեկն և ուսումնասիրել մեր յերկրի ժո-  
ղովուրդների պատմությունը:

Միթե կարելի յե ճանաչել մեր յերկիրը, առանց  
գիտենալու մեր յերկրի լեռները, վողջ աշխարհագրա-  
կան լանդշաֆտը: Ի հարկե, վհչ:

Այստեղից պարզ ե, վոր խորհրդային յերկրագե-

ուը—գավառագետը, պետք ե ուսումնասիրի նայե մեր  
յերկրի աշխարհագրությունը: Այդ անհրաժեշտ ե ամեն  
մի խորհրդային քաղաքացու, վորովհետև՝ «աշխարհա-  
գրությունը»,—ինչպես գրում ե «Պրավդան»—այն  
ուղիներից մեկն ե, վորով ընթանում ե պատանեկու-  
թյան իսկական մատերիալիստական աշխարհայե-  
ցողության, ինտերնացիոնալիզմի, գեղի հայրենիքի  
թշնամիներն ունեցած ատելության դաստիարակու-  
թյունը» («Պրավդա» № 250, 10 սեպտեմբերի 1937թ.):

Մյթե կարելի յե ճանաչել մեր յերկիրն առանց  
ուսումնասիրելու բնակավայրը, յերկրի բուսական և  
կենդանական աշխարհը, տեղական ֆուլկորը, ազգագլ-  
ուռությունը, պատմական հուշարձանները, կոլտնտեսա-  
յին կյանքը, սոցիալիստական շինարարությունը: Ի  
հարկե, վհչ: Այս բոլորը մտնում են խորհրդային գավա-  
ռագետի—յերկրագետի խնդիրների շարքը:

Ահա թե ինչն խորհրդային գավառագիտությու-  
նը քաղաքական լուսավորության և մասսաների  
քաղաքական դաստիարակության հզոր լծակներից  
մեկն ե:

Վորհնք են խորհրդային քաղաքական լուսավո-  
րության հիմնարկները: Դրանք են՝ բանվորական  
ակումբները, կոլտնտեսային ակումբները, խրճիթ-ըն-  
թերցարանները, կուլտուրայի տները: Ահա այստեղ ե,  
վոր պետք ե կազմակերպել գավառագիտության  
գործը, կազմակերպել այն հետաքրքիր և գրավիչ ձե-  
զով, վորպեսզի ընդգրկել ավելի մեծ թվով աշխատա-  
վորներ:

Ինչպես պետք ե արտահայտվի կազմակերպչա-

կան տեսակետից գավառագիտության աշխատանքները քաղաքական լուսավորության սփռմանը:

Ամենից առաջ պետք է նշել վոր մեր բոլոր տիպի ակումբներում պետք է կազմակերպել գավառագիտական յերկրագիտական սեկցիաներ, անկյուններ կամ սենյակներ: Կազմակերպել նայել պատմության, աշխարհագրության, գրականության, ֆոլկլորի, քաղաքացիական կորպուսների պատմության, ազգութեական և մեր յերկրի այլ բնագավառներն ուսումնամուլության խմբակներ:

Քաղաքական լուսավորության հիմնարկները՝ խորհրդային յերկրագիտության կամ ինչպես սովորաբար ընդունված ե յեղել մինչև հիմա ասել գավառագիտության աշխատանքները պետք է կազմակերպեն, առաջին հերթին և գլխավորապես հետեւյալ խնդիրների շուրջը:

1. Կազմակերպել գավառագիտական—յերկրագիտական անկյուններ կամ սենյակներ:

2. Կազմակերպել գավառագիտական—յերկրագիտական արշավներ, վորի համար մշակել հատուկ առողջապահություն մարզություններ գեղի քաղաքացիական կորպուսների գեղարքերի վայրերը, գեղի արդյունաբերական վայրերն ու կոլանտեսությունները, ծանոթանալ անվանի մարդկանց, ստախանովականների, հեղափոխության և պատմության հուշարձանների հետ, հավաքել ազգագրական նյութեր, ֆոլկլոր, Այդ արշավների արդյունքն այն կլինի, վոր հավաքած նյութերն ի մի բերելով, համապատասխան վերամշակման յենթարկելուց հետո հնարավոր կլինի ցուցադրել այն ակումբի կամ կուլտուրայի տանը կից

կազմակերպած գավառագիտական — յերկրագիտական անկյուննում կամ համապատասխան սենյակում:

3. Կազմակերպել եքսկուրսիաներ գեղի գավառագիտական թանգարանները: Կազմակերպել շարժական ցուցահանդեսներ հիմնարկությունների և ձեռնարկությունների կարմիր անկյուններում:

4. Կազմակերպել դասախոսություններ, գեկուցումներ, զրույցներ առանձին ձեռնարկությունների մասին, բնակավայրի, շրջանի, հանրապետության մասին և այլն:

5. Կազմակերպել դասախոսություններ, զրույցներ, գրականության ընթերցում, «Մեր հայրենիքի մասին» թեմաներով, ծերունիների պատմություններն իրենց գյուղի ու շրջանի անցյալի մասին — հատուկ յերեկոներ:

6. Կազմակերպել եքսկուրսիաներ գեղի առաջավոր կոլտնտեսությունները, խորհանտեսությունները, մեքենատրակտորային կայանները, կաթնա-ապրանքային ֆերմանները՝ մոտիկից ծանոթանալու գյուղատնտեսության առաջարկների աշխատանքի արդյունավետ ձևերին ու մեթոդներին:

7. Կազմակերպել ցուցահանդեսներ գյուղի և շրջանի անցյալն ու ներկան ցույց տալու նպատակով: Կազմել լուսանկարներով և դիագրամմաներով ալբոմներ:

8. Բոլոր տիպի կուլտուրայի տներում, ակումբներում, խճիթ-ընթերցարաններում կազմակերպել հատուկ անկյուններ «Մեր կոլտնտեսությունը» և նկարագրությամբ ցուց տալ, թե ինչպիսի պայքարը և մղվել կոլեկտիվացման համար, ցույց տալ կոլտըն-

տեսության աճը, նրա տնտեսական ու քաղաքական ամբապնդումը, յերջանիկ և ունեող կյանքի հասնելը, բացի գրանից, կարելի յե կազմակերպել նայե ցուցահանդես «Մեր շրջանը», ուղարկունքով, այսինքն, ցույց տալով շրջանի նվաճումները բոլոր բնագավառներում:

9. Կազմակերպել ստախանովականների պատկերասրան, սոցիալիստական գյուղատնտեսության առաջավորների պատկերասրան և այլն:

10. Կազմակերպել եքսկուրսիաներ դեպի պատմական վայրերը, ուսումնասիրել շրջանի պատմական հուշարձանները, քաղաքացիական կոիմսերի վայրերը և այդ բոլորը լուսանկարներով ցուցադրել գավառագիտական անկյուններում կամ առանձին սենյակներում:

11. Փորձնական կայանների և խրճիթ-լաբորատորիաների հետ մեկտեղ կարելի յե կազմակերպել փորձագրումներ հողի կազմությունն ուսումնասիրելու նպատակով, մոլախոտերի դեմ պայքարի ավելի արդյունավետ ձեվեր մշակելու համար:

Աշխատանքների այս ցանկը կարելի յե ավելի լայնացնել և ընդունել նման բազմաթիվ և բազմապիսի խնդիրներ:

Քաղաքական լուսավորության հիմնարկներն այս աշխատանքների մեջ լայնորեն պետք և ներդրավեն մեր գպրոցները, ուսուցչությանը և աշակերտությանը, պիոներական կազմակերպությանը և վերջապես, խորհրդային մեր յերիտասարդությանը — կոմյերիտաժիությանը:

Այսպիսով՝ խորհրդային հայրենիքն ուսումնասիրելու, այն ճանաչելու մեծ գործի մեջ ներդրավե-

լով ժողովրդական մասսաները, մեր դպրոցներին և յերիտասարդությանը, քաղաքական լուսավորության հիմնարկները խոշոր չափով կնպաստեն դաստիարակելու նըանց մեջ խորհրդային հայրենասիրության վառ զգացմունքներ, ճանաչելու մեր յերկերը և նվիրվելու մեր մեծ յերկրի բուռն վերելքին, աշխատելու և ապրելու հանուն մեր մեծ հայրենիքի, հանուն Լենինի—ՍՏԱԼԻՆի վեհ գործի:

ԽՈՐՀԱՅԻՆ ԳԱՎԱՐԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ  
ՅԵՎ ՊԱՏԱՆԻ ՆԱՏՈՒՐԱԼԻՍՏՆԵՐԸ

I

ՊԱՏԱՆԻ ԲՆԱԱՍԵՐՆԵՐԻ ԽՄԲԱԿՆԵՐ

Մեր յերկիրն առատ և բաղմաթիվ և անսպառ հարստություններով: Սոցիալիզմը՝ այդ հարստությունները հայտնաբերելու և ոգտագործելու անսպառ հնարավորություններ ստեղծեց: Մեր հզոր, Խորհրդային յերկրին նվիրված բազմաթիվ հետախույզներ՝ դեռև լոգներ, աշխարհագետներ, բնագետներ ամեն տարի նոր ու նոր հայտնագործություններ են անում, պրացատումներ կատարելով յերկրի ընդերքում, բնության ծոցում:

Սոցիալիստական հայրենիքի բնությունն ուսումնասիրող հազարավոր պատանի հայրենասերներ ունենք գործոցներում, գյուղում և քաղաքում, պիոներական կազմակերպություններում: Տարեցտարի բազմապատկում և պայծառ հայրենասեր—պատանի բնասերների հոծ բանակը:

Դավառադիտական ուսումնասիրությունների ուղղությամբ կատարված աշխատանքներում հսկայական գեր են խաղում պատանի բնասերները:

«Սիրել ու գնալ դիմի բնուրյունը, հանաչել այն բազմակողմանիորեն, ուսումնասիրել բույսերը, կենդանական աշխարհը, բնական հարստուրյունները»—ահա սա

յե պատանի բնասերների հիմնական խնդիրը:

Պետք ե ճանաչել բնությունը, վորապես կարուղանալ այն ծառայեցնել սոցիալիզմի—կոմունիզմի մեջ գործին, մեր մեջ յերկրի վերելքին:

Պատանի գավառագետ—բնասերը դիտում և բընությունն ամեն տեղ՝ տանը, դպրոցում, բայց զլիաշվորապես բնության գրկում:

Հատկապես նշանակություն ունի բնասեր-գավառագետների աշխատանքը դյուզում: Կազմակերպելով ֆենոլոգիական դիտողություններ կուլտուրական բույսերի նկատմամբ, պատանի գավառագետ—բնասերը խոշոր չափով ոգնում ե մեր գյուղատնտեսության բերքատվության բարձրացմանը, հետաքրքրություն և զարթեցնում գեղի բույսերի և այլ կուլտուրաների զարգացման գործը:

Պատանի բնագետ—բնասերների ամբողջ աշխատանքը պետք է ընթանա իրենց, բնասերների ցանկությամբ, նրանց մեջ զարթեցնելով անհատական հետաքրքրություն դեպի բնության այս կամ այն բնագույնը:

Սակայն այդ չի նշանակում, վոր բնասերների աշխատանքները պետք է թողնել ինքնահոսի, ինքնիրեն, ունի ինչով ազում ե, քող նրանով՝ ել զբաղվի: Վա՞չ: Ամենեվին այդպես չե:

Ամենից առաջ պետք է կազմակերպել յուրաքանչյուր դպրոցին կից, ակումբներում, պիոներական տներում, առանձին պատանի գավառագետ—բնագետների խմբակներ՝ բիոլոգների, բնագետների, գիոլոգների և այլն:

Ահա այս խմբակներում ե, վոր առաջին հերթին

պիտք ե ընթանա վողջ աշխատանքը: Պարզ ե, վոր յուրաքանչյուր խմբակի պետք է առաջադրված լինի լավ մշակված ծրագիր, յենելով խմբակի պրոֆիլից, միջովայրի առանձնահատկություններից, խմբակի անդամների հետաքրքրություններից:

Յեթե վորևէ հարց չի հետաքրքրում խմբակի այս կամ այն անդամին, բայց կերպով ստիպել, վոր նա զբաղվի այդ հարցով, հասրավոր չե:

Այս ինքրում, մեծ մասամբ, պետք է յենել պատանիների անհատական ընդունակություններից, նրանց անհատական հակումներից: Այլ կերպ վոչինչ չի ստացվի:

Դպրոցական գավառագիտական պատանի բնասերների խմբակները իրենց աշխատանքներն ամբողջապես պետք է կապեն դպրոցական գասավանդման ծրագրերի հետ: Որինակ՝ բիոլոգիան: Այս առարկայի գծով ինչ պիտի անեն պատանի բնասերները: Պարզ ե, վոր պատանի բնասերների խմբակի ղեկավարը դպրոցում իր առարկայի գծով հանդիսանում ե բիոլոգիայի դասատուն: Այսպիսի խմբակի նպատակը պետք է լինի ոգնել դպրոցականներին ավելի լավ յուրացնելու բիոլոգիայի վերաբերյալ դպրոցական ծրագրերը, այս գեղագում պարզ ե, վոր պատանի բնասերների ամբողջ ծրագրերը պետք է կառուցել համաձայն դասավանդվող նյութի ծրագրերի: Դպրոցականները այս հարցի վերաբերյալ կարդում են լրացուցիչ գրականություն, այցելում են տեղական թանգարանի կամ դպրոցական կարինեալ համապատասխան բաժինը և այսպիսով՝ նրանք ավելի խորը և լրիվ չափով յուրացնում են դպրոցական ծրագրերը բիոլոգիա

առարկայի գծով։ Սա պատաճի բնասերների խմբակի մի տիպն է։

Կա և կարող ե լինել նաև մի այլ տիպ, որինակը այս յերկրորդ տիպի խմբակի նպատակն է, բավարարել յերիտասարդության ինքնուրույն ստեղծագործական աշխատանքի բնական ձգտությունին և նրանց հետաքրքրող հետազոտական բնագավառի վերաբերյալ անհատական հակումներին։ Այս տիպի խմբակները խոշոր դրական գործ են կատարում։ Այս դեպքում խմբակի անդամները վոչ միայն բավարարվում են իրենց հետաքրքրող հարցերով, այլ նույնական ինքնյուրույն գիտահետազոտական աշխատանքի ունակություններ են ձեռք բերում, սովորում են զիտողությունների և փորձի հիման վրա ձեռք բերած տեղեկություններն ամփոփել։ Այսպիսի խմբակը խոշոր գաստիարակչական նշանակություն ունի։

Նա գաստիարակում ե յերիտասարդության մեջ մտքի համարձակություն, հետաքրքրություն դեպի բնությունը և բնական յերևույթները, համառություն և ակտիվություն առաջադրված նպատակին հասնելու համար։

Հենց այսպիսի նպատակի ել պետք ե հետապնդի ամեն մի աշխատավոր, վորն իր վրա և վեցըել պատաճի բնասերների խմբակի գեկավարման պատասխանատ գործը։

Այս ձեռվ կաղմակերպված պատաճի բնասերների խմբակը խոշոր հետաքրքրություն կզարթեցնի խըստակի անդամների մեջ, մեծ համակրություն կվայելի գպրոցում և իր շուրջը կհամախմբի բազմաթիվ դըպ-

րոցականների, պատաճի գավառագետ—հայրենասերների, վորոնք անհույսորեն նվիրված իրենց սիրելի հայրենիքին, կուսումնասիրեն իրենց բնակավայրը և ակախվորեն կմասնակցեն մեր մեծ յերկրի վերելքին, սոցիալիզմի—կոմունիզմի սքանչելի շինարարությանը։

15/9  
15/9



## II

## ԹՐՊՏՈՂ ՈՒ ՍՏԵԼԾԱԳՈՐԾՈՂ ՄՏՔԵՐԸ

Մեր հայրենիքի մատաղ սերունդն աշխարհի ամենայերջանիկ սերունդն է, յերջանիկ և վորովհետեվ նա աճում ու հասակ և առնում ստալինյան ջերմ արեվի կենսատու շողերի տակ և բազմաթիվ բուրավետ ճյուղերով տարածվում եւ գեպի արեվը: Նրանց, մեր մանուկների ու պատանիների մեջ, լեռնային կարկաչանս աղբյուրի պես հորդում եւ չքնաղ ստեղծագործությունը: Այդ ստեղծագործության ծաղկման վառ ապացույց եւ Համամիութենական Գյուղատնտեսական ցուցահանդեսը:

Ցուցահանդեսին մասնակցում եյին բազմաթիվ շնորհալի ստեղծագործող յերեխաներ:

Բոլորին հայտնի յեն մեր պատանի տեխնիկների, գյուղատնտեսների, պատանի բնասերների, գյուղատնտեսության փորձարարների նվաճումները:

Այս ամառ մենք ականատես յեղանք պատանի միջուրինականների փայլուն հաջողություններին, վորոնց աշխատանքները ներկայացվել եյին Համամիութենական Գյուղատնտեսական ցուցահանդեսում:

Յերեխանների աշխատանքի փորձը՝ բույսեր խաչաձեվելու, նոր սորտեր բուծելու, նոր մեթոդներ կիրառելու ուղղությամբ մեծ խրախուսանքի արժա-

նացավ սոցալիստական հողագործության վարպետների կողմից:

Չյուղատնտեսական ցուցահանդեսին մասնակցած յերեխանները՝ մասին կարծիքների գրքում կուրսկի մարդի մի խումբ կուտնտեսականներ գրել եյին.

«Բառերով զժվար և արտահայտել թե փորքան լավ ու հետաքրքիր և պատանի բնասերների պավիլոններ: Միայն մեր կուտնտեսականներ չնորհիվ կարող են այդպիսի վաղ հասակում յերիտասարդ տաղանդներ դարձանալ:

Այդպիսի տաղանդներ մենք շատ ունենք նաև մեզ մոտ՝ Հայաստանում: Ահա Աշտարակի շրջանից գյուղական Արծիվ Թամազյանը, նա Համամիութենական Գյուղատնտեսական ցուցահանդեսին և ներկայացել իր աճեցրած վարդի թուփը: Դիլ Քոչարյանը Վաղարշապատի շրջանի Սամաղար գյուղի լրիվ միջնակարգ գպրոցի աշակերտ ե, նա ցուցահանդեսին մասնակցում եր իր աճեցրած ճագարներով: Նա հինգ տարի յե դրադվում և ճագարաբուծությամբ և վորպես պատանի ճագարաբույժ, մեծ առաջադիմություն և ունեցել վերջին տարիներս: Նրա աճեցրած ճագարները հայտնի յեն իրենց քաշով, աճը կատարվում և արագ, կորուստներ չի տալիս:

Ահա Լեվիկ Կարապետյանը՝ նույնպես Սամաղար գյուղից: Լեվիկը խնամում և զարգացնում ե հնգկանավերի ցեղը և ցուցահանդեսին մասնակցել ե իր հնգկանավերով: Մնացական Վարդանյանը թռչնարույժ ե, խնամում և 78 աղավնի: Անյալ տարի Գյուղատնտեսական ցուցահանդեսին նա մասնակցեց իր խնամած և վարժեցրած նամակատար 17 աղամիներով:

Աղնիվ Դադայանը Յերեվանի Ռուսթավելու անվան դպրոցի աշակերտուհի յե, ուսենու ծառի վրա պատվաստել և խաղող և փորձը շատ հաջող և անցել. Առաջին անգամ նա 1933 թվին բերք ստացավ, այժմ նա շատ լուրջ կերպով զբաղվում է այդ գործով։ Նա պատրաստվում է մասնակցելու այս տարի կազմակերպվելիք Համամիութենական Գյուղատնտեսական ցուցահանդեսին իր պատվաստած խաղողի եքսպոնատով։ Բացի դրանից, Դադայանը զբաղվում է նաև մի շարք այլ պատվաստումներով։

Աչքի յեն ընկնում պատանի բնասերներ՝ Վիրաբ Պողոսյանը (Յովայից), Ստեփան Հովհաննիսյանը (Ղամարլույից) և շատ-շատերը։ Այսպիսի տաղանդավոր ու ստեղծագործող հազարավոր պատանիներ կան մեր յերկրում, վորոնց հարկավոր ե ոգնել խրախուսել և ուղղություն տալ իրենց աշխատանքում։

Սակայն, ինչպես Համ ԼկթեՄ կենտկոմի 10-րդ պլենումը նշեց, մանկական ստեղծագործությունը, վորափես արտադպրոցական աշխատանքի ամենահզոր լծակներից մեկը, անհրաժեշտ ուշադրության չեն արժանացել կոմյերիտական կազմակերպությունների կողմից։ Շատ դպրոցների բնագիտության դասատուներ հարկ յեղած ոգնություն ու ոժանդակություն չեն ցույց տալիս յերեխաներին։ Գյուղատնտեսության բնագավառում աշխատողները նույնպես չեն զբաղվում այս հարցերով։ Մինչեւ հիմա Հայաստանում չեն կազմակերպվել գյուղատնտեսական փորձակայաններ, վորափեղ հնարավոր լինի կենտրոնացնել պատանի բնասերների աշխատանքը և համապատասխան ուղղություն տալ նրանց։

Համ ԼկթեՄ կենտկոմի 10-րդ պլենումը կոմյերիտական կազմակերպություններից պահանջեց լրջորեն զբաղվել յերեխաների ինքնագործունեյության զարգացման հարցերով, մեծ հոգատարություն ցուցաբերել զեպի յերեխաների ձգտումներն ու պահանջները։

«Հարկավոր ե ծավալել բազմակողմանի և գրավել արտադպրոցական աշխատանք, ամենուրեք զբաղվել յերեխաների խելացի և կուլտուրական ժամանցի կազմակերպման գործով։ Յերեխաների հետ հարկավոր ե աշխատել յուրաքանչյուր բակում, յուրաքանչյուր տանը» («Պրավդա»)։

---

Խմբագրությամբ  
Ա. Մելիք-Փառայանի

Ի՞նք կԱՐԴԱԼ

Խորհրդային գավառագիտության — յերկրագիւտության վերաբերյալ կարելի յե կարդալ հետևյալ գրքերը.

1. Վ. Դարյան—Խորհրդային գավառագիտության խորհրդական 1939 թ., գինը 1 ոռոբլի:

2. Վ. Դարյան - Խորհրդային գավառագիտությունը և դպրոցը - 1939 թ., գինը 30 կոպեկ:

3. Առաջական ինչպես և վորտեղ կատարել յերկրաբանական գիտողությունները. եջ 67, գինը 50 կոպեկ:

4. Ալ. Արարատյան— Ֆեռոլոգիական դիտություններ. եջ 69, գինը 80 կոպեկ:

5. Ո. Գալըի ելյան — Պատանի բնասերների խմբակ. եջ 83, գինը 40 կոպեկ:

6. Վ. Դարյան—«Մաղկունիք» հանրամատչելի  
ակնարկ պատճիների համար. եջ 40, գինը 1 ռ.  
20 կոպեկ:



Տել. Խմբագիր և սրբագրիչ Վ. Պողոսյան  
Պատվեր № 3, հրատ. № 6  
Տերութ 1000, գլամիլիտի ինստիտուտ Զ-1066

**Հայկական ԽՍՀ Լուսժողկոմատի հրատարակչություն - Լուսհրատի տպարան, Ելքեան, Տերյան № 127**



20139

ԳԻՆԸ 50 Կ.